պիսկոպոսը 1868 թուին այցելութիւն եկաւ մեզ, տեղեկանալով ուսումնարանի տան շինութեան համար ժողովրդի նուիրած փողերի մասին, խոկոյն յիշեալ գումարի կէսից աւելի ժողովեց, և յանձնելով շինութեան Հոգաբարձուաց ձեռքը այն գումարը, սկսեց հիմն դնել. և յառաջ տաներ. Եւ ահա այս տարի բոլորովին վերջացաւ մեր ուսումնարանի տան փառաւոր շինութիւնը։

Վերոյիշեալ ամսի 30—ին կիւրակէ օրը յետ պատարագից երկու Եկեղեցեաց բոլոր հոգևորականք զգեստաւորված, խուռն բազմութեամբ ժողովրդեան գնացին նորաշէն ուսումնարանի տունը օրհնելու։ Այն տեղ դասադաս շարուած և Հոգաբարձուքը։ Երբ օրհնութեան հանդէսը վերջացաւ, դպրոցի Հոգաբարձուներից մինը Պատուաւոր խորհրդական Պ. Յովհաննէս Քուշուբէկեանցը, յառաջ գալով կարդաց մի գեղեցիկ ոգեշարժ ճառ, որը ունկնդիրների սրտերի մէջ խորը թափանցելով շատ ազդու տպաւորութիւն գործեց ամենի վերայ, որ ահա սոյն նամակիս հետ ուղարկելով առ Ձեզ Պ. Խմբագիր, խնդրում եմ ի խրախոյս մեր ազգայնոց հրատարակել սորան։

Ճառի վերջումը դպրոցի աշակերտքը երգեցին "Եղբայր եմք մեք" և զանազան ազգային երգեր։ Մինչ դեռ աշակերտքը երգում էին, բոլոր հոգևորականք և ժողովուրդք հրաւիրվեցան ուսումնարանի մէջ նախաճաշիկ անելու, որը պատրաստել էր Հոգաբարձու Պ. Ասատուրատուր Կաճկաճեանը, ուր ամենքն էլ շանպանսկու բաժակները ձեռքերը առնելով ոչ միայն շնորհաւորեցին նորաշէն ուսումնարանի Տունը այլև՝ բարձրաձայն կեցցէ նեռով ըմպեցին Վեհափառ Կաթուղիկոսի, և վիճակաւոր Առաջնորդի կենաց բաժակները, և յետոյ ժողովուրդը սրտի մեծ բաւականութեամբ և ոգեշարժութեամբ դարձան իւրեանց տները։

Դուէր Դաւթեան Դէորգեան

Ի 10 ին Յունվարի 1871 թ.
Ի Ղարս։

ԻՄ ՄԵԾԱՐԺԱԼԻ ԵՒ ԱԶՆԻՒ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ։

Ցիրաւի՝ մեր ամենիս համար այս օրս՝ մի նշանաւոր և արժանայիշատակ օր պիտի համարուի, որովհետև՝ մենք այսօր սկսում ենք մի քայլափոխ անելու քաղաքակրթութեան ասպարիզի մէջ։ Փառաւոր սկիզբն։ Եւ դուք այս նշանաւոր օրի հանդիսակատարութեանը ականատես լինելու աղագաւ՝ շնորհ ունեցաք այս տեղ ժողովվելով, բայց թէ դպրոցի զգացմունքներից շարժուած՝ սորա մասին թող պատասխանեն ձեզ ձեր սիրտը։ Բայց և այսպէս՝ դուք ի հարկէ տեսած էք շատ նշանաւոր և հանդիսաւոր օրեր, որոնք պատճառել են ձեզ համար և հրճուանք և բաւականութիւն. սակայն՝ քննելով այս խորհրդաւոր օրի մեծ նշանակութիւնը՝ առ ոչինչ համարվելու էին նոքա, և երբէք կարող չէին սորան հաւասարապատիւ լինել։ Շատերը մեր նախնիներից ցանկացան այս օրը տեսնելու՝ բայց չ՝տեսան. ոչ թէ անարժան էին նոքա կամակոր Իսրայէլացւոց ժողովրդեան պէս՝ որոնք որ անապատումը մեռան ու չարժանացան Աստեաց երկիրը մտնելու, ոչ, այլ թէ զանազան արգելարգելի պատճառներով նոցա համար այս ժամանակը ուշացաւ, և յետ մնաց մինչև այսօր։ Երանի՜ ձեզ սիրելի Քաղաքակիցներ՝ որ դուք էք տեսնում այս բարերաստիկ ժամանակը։ Այս օրն է՝ որ այսուհետև ձեր համար՝ ձեր որդիների համար մի մշանջենական բարութեան սեղան է պատրաստում՝, որոյ բարութենից ճաշակելով՝ երբէք, երբէք սոված ու ծարաւ մնալու չեն ձեր զաւակները, ոչ հոգեպէս և ոչ մարմնաւորապէս։ Երանի՜ ձեզ ասում եմ, վասն զի՝ այսօրվայ շնորհիւ՝ դուք սկսում էք ձեր կեանքի շրջանը փոխել, և սկսել մի նոր, փառաւոր կեանք ձեր մէջ, որ իբրև ուսումնասիրութեան փափագող ժողովուրդ՝ որով պիտի օր ըստ օրէ ծաղկիք և պայծառանաք, պարծանք հանդիսանալով Հայաստանեայց եկեղեցու և Հայոց ազգի ընդհանրութեանը. և ոչ այսքան միայն՝ այլև՝ ձեր կեանքի արժանաւոր գործքերը՝ իբրև բարեգործութեան օրինակ թողնելով ձեր զաւակների աչքի առաջև, պիտոյ է դուք ապագայում՝ շատ բարութիւնների պատ-

ծառ դառնաք. բան որում՝ ձեր զաւակները եւ՝ յետ ձեզանից հեռանալու են ձեր օրինակին. . . .

Ու այսպէս՝ դուք բաղդաւոր էք սիրելի իմ պաշտելի Հայրենակիցներ, որովհետեւ՝ ձեր զաւակների եւ ձեր յառաջադիմութեան պատճառը դուք իմացել էք, որ եւ՝ յատկապէս ձեր ձեռքով է պատրաստուած այդ բաղդաւորութիւնը։ Նայեցէք այս հոյակապ քարեայ շինուածքի վերայ, ինչպէս պայծառափայլ պատկերացած է ահա ձեր աչքերի առաջեւ, որ կարծէք թէ՝ կամի ազդարարել եւ ասել Ձեզ, թէ — ես եմ այն մեծամեծարար տունը՝ որ իմ ծածկոցի եւ հովանաւորութեան տակ պիտոյ է վերստին ծնանին եւ սնանին ձեր զաւակները, — եւ որ կամի ասել թէ՝ ես եմ լինելու ձեր զաւակների ապագայ բարօրութեան այն սկզբնապատճառը՝ որ մի ժամանակ պիտոյ է աշխարհ գան որպէս լուսաւոր եւ բարի Քրիստոնեայք, եւ որպէս պիտանի եւ խելացի անդամք ազգի եւ հասարակութեան։ — Նայեցէք միւսանգամ, — Նայեցէք ուսումն մատակարարող այս տան վերայ, որո՞նց աշխատութեամբ եւ քրտնաջան վաստակով է սա կառուցուած այս տեղ, եթէ ոչ ձեր ձեռքերի աշխատանքով, իմ քաղաքացի Հայեր,, — եթէ ոչ ձեր բարեմիտ նուիրաբերութեամբ ընծայած կոպէկներով, իմ ազնիւ Դղարեցիք։ Ձեզանից ամեն մինը՝ իրաւամբ կարող է պարծենալ այսօր, վասն զի՝ դուք իւրաքանչիւրդ անհրաժեշտ մասնակից էք դառնալու այս հոյակապ դաստակերտի կառուցանելուն, եւ սիրելի՝ փառք եւ պատիւ ձեզ սորա համար։ . . .

Ուրախացէ՛ք հապա՝ որ ձեր գործը բարեյաջողուած է այսօր սրբազան եղբայրութեամբ. — ուրախացէ՛ք որ այսուհետեւ ձեր անունը յաւիտեանս յաւիտենից պիտի անմահանայ աշխարհի երեսին։ Ուրախացէ՛ք եւ տեսէ՛ք թէ ձեր միաբանական մտացականութիւնը ինչ փառաւոր բան է յառաջացրել ձեր մէջ այսօր, — եւ ինչպէս մեր եկեղեցին հոգեւոր հանդիսականութեամբ տօնախմբելով՝ օրհնում է այս բարելիս ձեր Աստուածահաճոյ գործը։ Այսչափ մեծ ու պաշտելի է առաքինութեան գործը, եւ այսպէս է չափւում ամենայն բարի գործի մեծութիւնը։ Դուցէ, պարոններ, ձեզանից ոմանք անտարբեր աչքով նայելով սորա վերայ, առ ո՛չ ինչ համարելու էին մեր խօսքը. բայց այնպիսիների սիրտերը շարժելու եւ զգացմունքը յարուցանելու համար նոցա սրտի մէջ՝ բաւական կ՛լինէր կարծեմ՝ եթէ՝ մատնացոյց առնենք այս մանր ու մեծ մանուկների ու պատանեակների խումբը, որ աչա՛ իւրեանց դաստիարակների, եւ խնամածու Հոգաբարձուների հետ ի միասին ներկայացած են այստեղ։ Տեսէ՛ք այս մանուկները՝ եւ պատանեակները մի փոքր յառաջ սորա անխնամ, անդաստիարակ կը թափառէին փողոցներում, բնաւին զուրկ մնալով բարոյական եւ իմացական կրթութենից, իսկ այսօր՝ բարերար ձեռքերի շնորհիւ եւ ձեր յառաջ կամեցողութեամբ խնամարկուելով մի ազգային բարեկարգ դպրոցի մէջ, կարող են ձեզ համարձակ պատասխանատու լինել գիտութեան առարկաների ամեն սկզբունքներից։ Խօսքիս ստուգութեան համար որպէս ապացոյց առաջ կ՛բերեմ այն եղելութիւնը, որ քանի մի օր յառաջ կատարուեցաւ մեր մէջ։ Վիճակիս առաջնորդ բարձր Սրբազան Գէորգ Արք. Եպիսկոպոսը այցելութիւն գործելով մեր դպրոցին՝ իւր ակնկալութենից վեր գտաւ նորան։ Երկու ժամու չափ մնալով դպրոցի մէջ, եւ տեսնելով այս մանուկների եւ պատանեակների յառաջադիմութեան շնորհները, խոստովանեցաւ, որ՝ թէ իւր վիճակի եւ թէ Ռուսաստանի միւս Հայաբնակ տեղերի՝ մինչեւ այժմ նոր բացուած ուսումնարանների մէջ՝ Դղարու դպրոցը առաջին տեղն ունի։ Ի՞նչ արժէ ուրեմն մի այսպիսի գովասանական խօսք դէպի մեզ վերաբերեալ, — ո՞չ ապաքէն պատիւ է մեր ամենիս համար։ — Ի՞նչ արժէ, որ այսօր այս տեղ 160 թուով եւ աւելի երեխայք՝ գոլով մեծ մասը չքաւոր ծնողների զաւակունք՝ բաւական չէ որ երկու լեզուով գիտեն ուղիղ գրել կարդալ, եւ շատերը սոցանից ոչ միայն ձեր հարցասիրութեանը յաջողակ տեղեկութիւն կ՛տան կրօնի ուսմունքից, սրբազան, եկեղեցական, ազգային, եւ ընդհանուր պատմութիւններից, — երկու լեզուի քերականութիւններից, թուաբանութենից, բնական, ուսումնական եւ քաղաքական Աշխարհագրութենից. այլ եւ՝ ազատ կը շարադրեն եւ կը թարգմանեն թէ Հայերէնից Ռուսերէն, եւ թէ՝ դէպի հակառակն, Ո՞չ ապաքէն այս փառք է ձեզ համար, սիրելի Հայրենակիցներ, որ ձեր որդիքը ազատուելով փո-

ղոցի դատարկաշրջութենից և մոլութիւնների մէջ շեղվելուց, այսօրս խնամարկող թևերի տակ՝ ուսանում են Աստուածաճանաչութիւն, վարքի ու բարքի ազնուութիւն, և սահմանեալ չափով ուսումն,—ուսումն, որոյ նշանակութիւնը շատ բարձրը է, և արդիւնակատարութիւնը շատ մեծ այս աշխարհիս մէջ . . .

Ձեմ բացատրում ուսման արգասիքները, ըստ որում՝ ձեզ ամենեցուն յայտնի է՝ թէ սա՝ ի՞նչ երևելի գործեր է կատարում աշխարհի ազգերի լուսաւորութեան ասպարիզում . . . Շատ յետամնաց և նախապաշարված մարդ պիտոյ է լինի նա՝ ով ընդհակառակը կըպնդէր և կասէր թէ՝— պէտք չէ՛ ուսումն մեր զաւակներին, Թողնե՛նք մեր ժամանակը՝ որ ներկայումս աշխարհ ամենայն կարծէք ուսումնարան է դարձել, և որ ամեն ազգ և հասարակութիւն իւր կարողութեան չափով մեծ պահանջողութեամբ գիտութիւն և իմաստութիւն կինդրէ, այլ դառնանք մտքով դէպի հին դարերը և մենք կըտեսնենք որ այն խաւար դարերումը շատ ազգեր քանի գիտութեան և իմաստութեան կը հետևէին անուն ստացան, լուսաւորվեցան և ծաղկեցան, և ընդհակառակը՝ իսկ երբ մերժեցին նորան՝ անհոգս ու անշարժ կենալով խաւարեալ մնացին, ու տգիտութեան թշուառութիւնների մէջ միայն խորասուզվելով թաղուեցան։ Ինչով ծաղկեցան մի ժամանակ Յոյնք և Հռովմայեցիք, եթէ ո՛չ գիտութեան հետամուտ լինելով, որ այսօրս այդ գիտութիւնը անսահման ընդարձակութեամբ նոցանից մնաց այլ և այլ ազգերի մէջ . . . Ի՞նչ միջոցաւ ստացան մեր նախնիքը հինգերորդ դարում Հայաստանեայց եկեղեցու, և մեր լեզուի գրագիտութեան լուսաւորութիւնը, որ այսօրս նոյնութեամբ պահպանում ենք, և կամ Յունաց, Ասորուց, Եբրայեցւոց, Լատինացւոց լեզուների քաջ հմտութիւնքը, որ որոնցով հիանալի ճշդութեամբ յիշեալ լեզուներից թարգմանեցին դէպի Հայ լեզու բոլոր սրբազան գրքերը, եթէ ո՛չ գիտութեան և ուսման հետևելով։ Մեր Փրկիչը ինքը անգամ պատուիրում էր ասելով,—"Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքաք ունել զկեանսն յաւիտենականս։" Բայց հազարաւոր տարիներ յառաջ, յառաջ քան թէ մեր Փրկիչը ասել էր այս խօսքերը, այն խաւար դարերու մէջ Իմաստունն Սողոմոն ասաց սորա մասին թէ՝—"Ուրախ եղէ ընդ ամենեսին որոց առաջնորդէր իմաստութիւն, բայց գիտէի ո՛չ թէ ծնունդ իցէ ամենայն բարութեանց, Զի անպակաս գանձ է նա մարդկան, որով ոք վարեցանն՝ առ Աստուած առաքեցին զբարեկամութիւն, վասն առ ի խրատուէ պարգևացն ընծայեալք . . . . ,"Եւ այսպէս իմաստութենից (բայց դուք իմացէք ուսումից) յառաջ եկող բարութիւնքը մի առ մի թուելով Իմաստունը՝ աշխարհի շատ թանկագին բաներից վեր է դասում նորան։ Ահա՛ այսչափ մեծ ու արդիւնաւէտ է ուսումնասիրութեան հետևանքը, որոյ հիմնաւորապէս ստանալու մասին հետամուտ էք և դուք իմ ազնի՛ւ Քաղաքացիներ,—որոյ ճաշակը ձեր մանուկ անդամների մէջ տարածելու համար, իբրև ապացոյց ձեր եռանդուն ուսումնասիրութեան կանգնացրել էք ահա՛, այս ուսման տաճարը,— այս փառաւոր տունը, և ո՛չ այսչափ միայն՝ այլև շատ շուտով յուսով ենք բացուած տեսնել ձեր հոգացողութեամբ այն ուսումնարանի տան դռները, որ տեղ պիտի դաստիարակուին իբրև լուսաւոր մայրացուք և ձեր կանացի նոր սերունդը, որ արդէն այս մասին ամենայն բան վերջացած. և ուսումնարանը Մարիամեան անունով պիտի բացուի քանի օրից յետոյ։

Վերուղղե՛նք ուրեմն մեր խնդրուածքը առ բարձրեալն Աստուած՝ սիրելի Հայրենակիցներ, որ օրհնէ մեր այս սուրբ գործը, ուղարկելով իւր սուրբ Հոգին մեր մէջ, նորոգելով ու լուսաւորելով մեզ գիտութեան և իմաստութեան լուսովն, և տալով մեզ կարողութիւն և սէր միաբանական, որ հոգալ կարողանանք մեր երկսեռ զաւակների բարեաց դաստիարակութեան կարիքները։ Աղօթենք առ Աստուած, որ իւր սուրբ Հոգու շնորհը ծաւալելով այս նորաշէն Տան վերայ, սորա միջոցաւ բաշխէ մեր մանուկ սերնդին շնորհ և իմաստութիւն, առաքինի Քրիստոնէայք և կենցաղօգուտ մարդիկ մեծանալու այս աշխարհիս մէջ։ Նա մանաւանդ՝ այսօր սուրբ Էջմիածնայ Կաթուղիկէ եկեղեցու տօնը լինելով՝ որպէս մի խորհրդաւոր օր մեզ համար՝ որ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Վիրապից կանչեցին յետոյ՝ այսօր լու-

սաւորեց մեր Հայաստան աշխարհը Քրիստոնէական լուսով, մաղթենք Աստուծուց որ մեր սուրբ Հոր Լուսաւորչի բարեխօսութեամբ՝ այն լոյսը անշամանգաղ փայլի մեր մէջ . . . Մաղթենք Աստուծուց մեր բարերարների համար կեանք երկար, եւ առաւել՝ նախ՝ Ինքնակալ Կայսեր ամենայն Ռուսաց Ալէքսանդր Բ-ի. որոյ խնամարկութեան ներքոյ այսօր հնար ու միջոց ունենք ո՛չ միայն ապահովապէս ապրելու, այլև՝ քաղաքակրթելու. և երկրորդ՝ մեր Վեհափառ Գէորգ Դ. Կաթողիկոսի, և վիճակիս առաջնորդ Գէորգ Արք Եպիսկոպոսի թանկագին կենաց համար, որ նոցա յատուկ հոգացողութեամբ կանգնեցաւ մեր մէջ այս շքեղաշէն ուսումնարանը։ Եւ վերջապէս ի բոլոր սրտէ հայցենք Աստուծուց մեր Հայոց հասարակութեան համար յարատև ամբողջութիւն, Աստուածահաճոյ գործոց յաջողութիւն, և միշտապայծառ լուսաւորութիւն, ի փառս և ի պարծանս մեր ազգութեան և եկեղեցու, ամէն։

Յովհաննէս Վարդապետեան

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԻՋԵՒԱՆՆ ՁԱՆՏԱՆԻ

Լուծագրութեան Էջերեց Մամագրոյ։

Օրափոխութեան պատճառաւ, որ ի 25ն անցեալ Յունիս ամսոյ գնայր Ս. Կաթողիկոսն ի Ս. Անապատն Սէվանու, մի հրաշագեղ տեսարան կազմեց արդարև Ծաղկոցաձոր գաւառումն անջրդի ջրաբբիման տեղը՝ որին սովորաբար ասումն Сухои-Фонтанъ Յերևան քաղաքի երկրորդ իջևանը станція։

Թէպէտ Վեհ. Կաթողիկոսի մեկնելը ի Ս. Էմիոնն եղեալ էր ի 24ն նոյն ամսոյ, սակայն Յերևան քաղաքումը իջևանելով նոյն դիշերը 25ին վաղն առաւօտեան տարածեցաւ Նորին Վեհափառութեան գալստեան լուրը Ծաղկոցաձոր գաւառի բնակչաց մէջ. որք անյապաղ նոյն առաւօտեան ժամը 8ին հանդիսացան Փանտան անուանեալ տեղումը քահանայք, իշխանք, երեսփոխանք և հասարակ ժողովրդականք, սորանց հետ միասին և Ալափարս գիւղի ծխական դպրոցի աշակերտք իւրանց ուսուցչի հետ. որք շքեղացուցանելով Նորին Օծութեան հանդիսաւոր ընդունելութիւն՝ սփռել էին իջևանի դրան առաջին գոյն զոյն ծաղիկներ մինչի ճանապարհը։

Ժամը 10ին երևեցաւ Նախընթաց ձիարշաւը, որը և ստուգեց վսեմ՝ Հիւրի գալուստը, և առ հասարակ բոլոր հանդիսականք պատրաստեցան կարգ, կարգ քահանայք ժողովրդականք և յիշեալ դպրոցի աշակերտք իւրեանց վարժապետաւն։ Հինգ բոպէից յետոյ երևեցաւ Նորին Վեհ. Օծութեան կառքը. որը և անմիջապէս կանգնեց ակնկալուաց առաջին, նոյն բոպէին վերոյիշեալ աշակերտք սկսեցին ,,Մեզ նոր արև ծագեց,, սրտաշարժ երգը. սոյն միջոցին դուրս գալով Վեհ. Կաթողիկոսը և խաչակնքելով զբոլոր հանդիսականքը՝ գնաց պատրաստեալ սենեակն, ուր և հանգստանալով մի ամբողջ ժամ, ապա բարեհաճեցաւ ընդունել իւր առաջը զներկայ գտեալ աշակերտքն իւրեանց քահանայիւք և իշխանօք հանդերձ։ Անդ աշխոյժ երիտասարդ Նոր Բայազիդ քաղաքացի Եղիազար Տ. Միքայէլեանցը՝ ուսուցիչն սոյն մանկանց ընթերցաւ զյետագայ համառօտ և ազգու ճառը, որն որ ոչ սակաւ ըներկրանք պատճառեց Նորին Օծութեան ազգասէր սրտին մէջ. և խրախուսելով զբոլոր աշակերտքը փոքրիկ հարցաքննութեամբ ուսանելի առարկայից վրայեաք. տեղեկացաւ նոցա փոքր միջոցի վաստակեալ յառաջադիմութեանց վրայ. օրհնեց հայազգի հասարակութիւնքը նոյն գեղջ, խոստանալով իւր առանձին խնամոց և հովանաւորութեանց ներքոյ ունել միշտ սոյն դպրոցը յարատևութեան աղագաւ։ Եւ ապա ժամը 12ին մեկնեցաւ ստանցիայից այս Վեհ. Հիւրը յիւր գէմ եղեալ Նպատակը (յանապատն Սէվանու)։ Ներկայ գրութիւնս խնդրելով ի խմբագրութենէն պատուական Արարատ ամսագրոյդ՝ զետեղել ամսաթերթիդ արդիւնաւէտ էջերի մէջ ի խրախուսութիւն նոյն գիւղականաց և ի տեղեկութիւն համայն հայազգի ուսումնասիրաց։

Գ. Յակոբեանց։

30 Յունիս 1871 թ.

Յուլիս։